ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 17/24/380-23 « » 2023թ.

«EcoNews.am» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԽՆԲԱԳԻՐ ՄԱՐԻԱՄ ՏԱՇՉՅԱՆԻՆ

(էլ.փոստ՝ mariam199107@gmail.com)

Հարգելի՛ տիկին Տաշչյան,

Ի պատասխան Ձեր՝ 25.12.2023թ. Երևանի քաղաքապետարան առցանց ուղղած հ. Դ-161798-23 հարցմանը, տեղեկացնում եմ, որ համաձայն 28.12.2023թ. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի հ. եկ-123-2023 գրության՝ Երևանի կենդանաբանական այգում խնամվող 14 գործ արջերի և 12 սպիտակաագլուխ անգղերի արտահանումը կատարվել է Երևանի քաղաքապետարանի թույլտվությամբ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գիտությամբ և ԵԿԱ կառավարման խորհրդի համաձայնությամբ: Կազմակերպության 2022թ. հաշվետվություններում հստակ նշված է առանց ծագման փաստաթղթերի, անհայտ հիմնավորումներով, անժամկետ խնամվող գորշ արջերի խնդիրը: ԵԿԱ արխիվում բացակայում են կենդանիների այգում տեղակայվելու և տարիներ շարունակ այգու բյուջեի հաշվին պահվելու իրավական հիմքերը, համապատասխան փաստաթղթերն ու որոշումները:

ԵԿԱ կառավարման խորհուրդը մշտապես տեղյակ է եղել արկա խնդրին, մասնակցել և մասնագիտական խորհրդատվություն է իրականացրել այգու հավաքածուի կազմման, վարման և մարտավարական զարգացման գործընթացում: Այգում առանց օրինական հիմքերի պահվող արջերի «Greens Zoological, Rescue & Rehabilitation Center» (Հնդկաստան) տեղափոխման որջ գործընթացն իրականացվել է ԵԿԱ կառավարման խորհրդի գիտությամբ և մասնագիտական վերահսկողության ներքո: Նախագիծն առաջին անգամ ներկայացվել է 2022թ. տարեկան հաշվետվության ներկայացման ժամանակ, հետագայում քննարկվել է նիստերի ժամանակ:

«Ֆաունա Զու» ՍՊԸ-ն արջերի և սպիտակագլուխ անգղերի «Greens Zoological, Rescue & Rehabilitation Center» տեղափոխման հետ առնչություն չունի: Միակ առնչությունը կայանում է նրանում, որ տարբեր տարիների, ՀՀ տարբեր վայրերից փրկված և կենդանաբանական այգում խնամվող արջերից երեքը այգուն նվիրաբերվել է «Ֆաունա Զու» ՍՊԸ-ի կողմից:

Կենդանիներն արտահանվել են «Greens Zoological, Rescue & Rehabilitation Center» (Հնդկաստան) համաձայն պայմանագրի, որի կնքելուն նախորդել է հիշյալ կենտրոնի ֆինանսա-տնտեսական և գիտական հնարավորությունների պարզաբանումը, իսկ կենդանիների պատշաճ խնամքի պարտավորությունը հստակ գրանցված է կնքված պայմանագրում: Կենդանիների մասին տվյալները պարբերաբար տրամադրվել են կենդանաբանական այգուն:

Կենդանիների տեղափոխման բանակցությունների ողջ ընթացքը ժամանակին և սահմանված կարգով տրամադրվել է Երևանի քաղաքապետարանին, Երևան քաղաքի ավագանուն և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը:

Գորշ արջերի, ինչպես նաև սպիտակագլուխ անգղերի նույնականացման տվյալները (ID) գրանցված են SITES արտոնագրերում, ինչպես պահանջում է արտոնագրերի տրամադրման միջազգային կանոնակարգը: SITES արտոնագրերի պատճենները կարող են տրամադրվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Կենդանաբանական այգում իրականացված անկախ գույքագրման արդյունքները վկայում են, որ այգուն (Երևան քաղաքի համայնքին) պատկանող, գույքային համարներ ունեցող 4 գորշ արջերը գտնվում են այգում:

Առդիր՝ 9 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Կատարող՝ Է. Արամյան
Բնապահպանության վարչություն
Հեռ.՝ (011)514-263